

ԲԻԶՆԵՍ

ԳԻՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՓՈՔՐ ԵՎ ՄԻԶԻՆ ԲԻԶՆԵՍԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ»

Օգոստոսի 30-ին փոքր եւ միջին գործարարների հետ հանդիպմանը, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդես եկավ ներդրումային խորհրդի աշխատանքին գործարարների ներգրավման առաջարկով:



Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքերով, արդեն հիմնվել է ներդրումային խորհուրդ, որտեղ ընդգրկված են խոշոր միջազգային ֆինանսական ինստիտուտների, վրացական բիզնես ասոցիացիայի եւ առեւտրա-արդյունաբերական պալատի ներկայացուցիչները:

- Լավ կլիներ, եթե խորհրդի կազմում ներգրավվեին նաեւ փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչները (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՉՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴՈՒՄԱՅԻՆ ԱՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԶԱՄԱՐ 64-ԻՑ 45 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ԳՐԱՆՑՎԵԼ

Չոկտեմբերի 8-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայց ներկայացրած 64 քաղաքական կուսակցությունից գրանցել է 45-ը:



Ինչպես տեղեկացրին ԿԸԳ-ից, 19 կուսակցությունների գրանցումը մերժվել է: Ընտրադաշնակների գրանցումը մեկնարկեց օգոստոսի 26-ին եւ ավարտվեց օգոստոսի 28-ին:

Գրանցում են անցել «Վրացական երազանք-ժողովրդավար» (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ն Է

Վրաստանի օրենսդրության համաձայն, ընտրություններին մասնակցից քաղաքական կուսակցությունները, ընտրական դաշինքները պարտավոր են մինչեւ ընտրությունների օրը՝ հոկտեմբերի 8-ը, 30 օր շուտ, այսինքն՝ մինչեւ սեպտեմբերի 8-ը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին հանձնել ընտրացուցակները:

Միաժամանակ, ընտրացուցակի ներկայացումը առնվազն երկու օրվա ընթացքում, զբաղեցրած պաշտոններից հեռանալու են ցուցակներում ներառված Վրաստանի նախագահը, նախարարները (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

«ՔՈ ԶԱՅՆԸ՝ ՔՈ ԱՊԱԳԱՆ»



Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին «Քո ծայրը՝ քո ապագան» քարոզարշավի շրջանակներում եղավ Ռաժա-Լեչխուժի տարածաշրջանի Ամբրոլաուրիի ամառային դպրոցում եւ ծանոթացավ նախագծի ընթացքին:

Գումը առաջիկա խորհրդարանական ընտրություններում, դու իրաժարվում ես երկրի լիարժեք քաղաքացի լինելու իրավունքից»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

Գիորգի Մարգվելաշվիլին քաղաքական կուսակցություններին կոչ արեց ակտիվորեն ներգրավվել ընտրարշավին եւ բնակչությանը ներկայացնել իրենց նախընտրական ծրագրերը:

Չիչեցնենք, որ վերոնշյալ նախագիծն իրականացվում է երկրի նախագահի նախաձեռնությամբ ու նրա պահուստային հիմնադրամի ֆինանսավորմամբ: Նախագծի նպատակն է՝ Վրաստանի բնակչության շահագրգռվածության մակարդակի բարձրացումը:

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՅՈՒՆՆԵՐԻՆ

Առաջիկա նոր ուսումնական տարվա համար, Վրաստանի հանրային դպրոցների 53540 առաջին դասարանիչներին որպես նվեր կտրվեն Lenovo idea pad 300S-11IB տիպի համակարգիչներ:



Համակարգիչներ կփոխանցվեն նաեւ տասներորդ դասարանի աշակերտներին, ովքեր ավարտել են բազային աստիճանն ու առանց կլորացման հավաքել տասը միավոր: Համակարգիչներ կստանան նաեւ առաջին դասարանների դասղեկները: (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԻՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԿԱՅՑԵԼԻ ԵՐԵՎԱՆ

Սեպտեմբերի 5-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մեկօրյա աշխատանքային այցով կմեկնի Երեւան:

Այցի շրջանակներում Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպումներ կունենա Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Յուրի Կրիստապյանի հետ: Հանդիպումներում կքննարկվեն վրաց-հայկական երկկողմ հետաքրքրությունները, տնտեսական համագործակցության ընդլայնման ու խորացման հեռանկարները տարածաշրջանին առնչվող հարցեր:

ԳԻՐԳԻ ՍԱԳԱՆԵԼԻՁԵՆ ԴԵՄՊԱՆԻ ՀԱՎԱՏԱՐԱՄԱԳՐԵՐԸ ԶԱՆՁՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԻՆ

Օգոստոսի 30-ին Հայաստանում Վրաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սազանջիձեն իր հավատարմագրերը հանձնեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին:

Հայաստանի նախագահը շնորհավորեց դեսպանին պաշտոնը ստանձնելու կապակցությամբ եւ մաղթեց հաջողություններ դիվանագիտական առաքելությունն իրականացնելու գործում: Սերժ Սարգսյանը վստահություն հայտնեց, որ նորանշանակ դիվանագետն իր կարելու ներդրումը կունենա տարբեր (Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ԵՐԿԿՈՐՄ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՊԱԿԵՏՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ

Օգոստոսի 24-ին Բաթումիում տեղի ունեցավ Աջարիայի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Ալթանդիլ Բերիձեի հանդիպումը Հայաստանի գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանի հետ:

Հանդիպմանը կողմերն անդրադարձան վրաց-հայկական փոխհարաբերությունների շրջանակում ապակենտրոնացված համագործակցությանն առնչվող հարցերին: Այդ համատեքստում կարեւորվեց երկու երկրների տարածաշրջանների ՏԻՄ կապերի ամրապնդմանն ուղղված գործունեության շարունակականությունը: Մտքեր փոխանակվեցին Լոռու մարզի եւ Աջարիայի ԻՉ միջեւ ստորագրված համագործակցության համաձայնագրով ընձեռվող հնարավորությունների շուրջ: Ավթանդիլ Բերիձեն մշեց, որ իր ղեկավարած կառույցը մշտապես աջակցում է երկկողմ համագործակցության ծրագրերին, որոնք, մասնավորապես, ուղղված են առեւտրատնտեսական, զբոսաշրջության, մշակութային ոլորտներում հարաբերությունների խորացմանն ու ամրապնդմանը: Երկուստեք բարձր գնահատվեց աջարահայ համայնքի պատմական կարեւոր դերակատարությունը երկկողմ բարեկամական հարաբերություններում:

ՏԵՄԱԿԵՏ

ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՀԵՌՈՒՄՏԱԵԹԵՐ

Սեպտեմբերի 1-ին Թբիլիսիում գործող GDS հեռուստաընկերության եթերով «Հանդիպում տարածաշրջանային լրատվամիջոցների հետ» հաղորդաշարի շրջանակներում, Վրաստանի նախկին վարչապետ Բիծինա Իվանիշվիլին լայն հասարակայնությանը ներկայացրեց իր հայեցակետը երկրում զարգացող իրադարձությունների, առաջիկա խորհրդարանական ընտրությունների, Վրաստանում իրականացված եւ իրականացվելիք բարեփոխումների վերաբերյալ:



ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ «ԵՐԱՅԱՆՔԸ» ՍՈՒՔԵ ԿՈՐՐՄԻ 100 ՊԱՏԱՍՎՈՐՈՎ Վրաստանի նախկին վարչապետ Բիծինա Իվանիշվիլին հեռուստահաղորդման ժամանակ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԲԻԶՆԵՍ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՆԿՎԻԼԻ. «ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԸ ՊԵՏՔ Ե ՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ»


(Սկզբը՝ 1-ին էջում)

ցիցները: Տվյալ խորհուրդը յուրատեսակ հարթակ է, որտեղ նախօրոք կքննարկվեն օրենսդրական նախաձեռնությունները, որոնք առնչվում են էկոնոմիկային եւ ապա հնարավոր կլինի խուսափել անցանկալի

անակընկալներից, բարձրացնել երկրի տնտեսական միջավայրի կանխագծման մակարդակը,- ասաց վարչապետը: Հանդիպմանը վարչապետն անդրադարձավ նաեւ տնտեսական իրավախախտումների համար պատժամիջոցների թեմային, նշելով, որ ներ-

կայումս կառավարությունն աշխատում է լրացուցիչ փոփոխությունների մշակման ուղղությամբ, որոնք նախատեսում են տնտեսական հանցագործության համար նախնական կալանքը կիրարկել միայն հատուկ պայմաններում: Խոսելով կառավարության

չորս կետից կազմված ծրագրի մասին, վարչապետը նշեց, որ այն հիմնականում ուղղված է տնտեսական աճի արագացմանը եւ այդ տեսանկյունից իրականացվել են որոշակի փոփոխություններ, այդ թվում՝ վերացվել է շահութահարկը:



ՈՒՋՔԵԿՍԱՆ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ՎԱԽՃԱՆԿԵԼ Ե ՆԱԽԱԳԱՀ ԻՍԼԱՄ ՔԱՐԻՍՈՎԸ

Ուզբեկստանի կառավարությունը երկու օր է, ինչ շարունակում է տարածել տեղեկությունն այն մասին, որ նախագահ Իսլամ Բարիդովը գտնվում է օրհասական վիճակում:

«Սրտի մեծ ցավով հայտնում ենք ձեզ, որ անցած օրվա ընթացքում մեր նախագահի վիճակը կտրուկ վատացել է եւ, բժշկների կարծիքով, այն զնախատվում է օրհասական»,- ասված է Ուզբեկստանի նախարարների գրասենյակի կողմից տարածված հաղորդագրության մեջ:

Համաշխարհային ՉԼՄ-ը տարածել են թուրքիայի, Տաջիկստանի, եւ մյուս մի շարք պետությունների բարձրաստիճանականների ցավակցությունները Իսլամ Բարիդովի մահվան կապակցությամբ, չնայած դրան, Ուզբեկստանի կառավարությունը դեռեւս պաշտոնապես չի հաստատում նախագահի մահվան փաստը:

ԻՏԱԼԻԱ

ԳՐԱՆՑՎԵԼ Ե ՇՈՒՐՁ 3 ՀԱՉԱՐ ԴԵՏՏՏՆՑՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, 6,0 մազմիտուդով ուժգին երկրաշարժը լույս օգոստոսի 24-ի գիշերը տեղի է ունեցել Իտալիայի կենտրոնական մասում: Ավերածություններ են գրանցվել Լաջոյի, Մարկեի եւ Ումբրիայի մարզերում: Մյուսներից ավելի շատ տուժել է Ամատորիչե բնակավայրը, որտեղ զոհվել է ավելի քան 230 մարդ, իսկ ընդհանուր առմամբ տարերային աղետի զոհերի ընդհանուր թիվը հասել է 293-ի:

Իտալիայի կենտրոնական մասում լույս օգոստոսի 24-ի գիշերը տեղի ունեցած առաջին ավերիչ ստորգետնյա ցնցումից հետո անցած մեկ շաբաթվա ընթացքում երկրաշարժի գոտում գրանցվել են երկրի մակերեսային տարբեր ուժգնության ավելի քան 3 հազար տատանումներ:

ԱՄՆ

ԱՐՏԱՎԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԻ 15-ՐԴ ՏԱՐԻՆ

ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման, ահաբեկչական սպառնալիքի կապակցությամբ, օգոստոսի 30-ին մեկ տարով երկարացրել է արտակարգ դրության ռեժիմը երկրում, որն ի սկզբանե հայտարարվել էր 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո:

ԱՄՆ նախագահի կարգադրության մեջ նշվում է, որ արտակարգ դրության ռեժիմի եւ իշխանությունների համապատասխան լիազորությունների երկարացումը պայմանավորված է ահաբեկչական գործողությունների պահպանվող սպառնալիքով: Գործող ռեժիմի ժամկետը լրանում է 2016 թվականի սեպտեմբերի 14-ին:

ԲՐԱԶԻԼԻԱ

ՆԱԽԱԳԱՀ ԴԻԼՄԱ ՌՈՒՄՍԵՖՅԻ ԻՄՊԻԶԻՏՆԵՆՏԸ ՎԱՎԵՐԱՑՎԵՑ

Բրազիլիայի Դաշնային սենատը (խորհրդարանի վերին պալատ)՝ 61 կողմ 20 դեմ ձայների հարաբերակցությամբ պաշտպանել է Դիլմա Ռուսսեֆի իմպիչմենտը՝ երկրի նախագահի պաշտոնից:

Դա նշանակում է, որ նա վերջնականապես կլքի իր պաշտոնը, իսկ երկիրը մինչև 2018 թվականը կզլխավորի փոխնախագահ Միշել Տեմերը:

ԱՅՑ

ՕՐԱՎԱՐԳՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՐՁԵՐՆ ԷԻՆ

Օգոստոսի 31-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մեկօրյա պաշտոնական այցով գտնվում էր Բաքվում:



Մաքեի արտաքին գործերի փոխնախարար Գիգի Գիգիձենը:

Այցի շջանակներում Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպում ունեցավ Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի, երկրի վարչապետ Արթուր Ռասիզադեի հետ: Բանակցությունները անցկացվեցին ինչպես դեմառդեմ, այնպես էլ՝ ընդլայնված ձևաչափով:

Բանակցություններին կողմերը քն-

նարկեցին էներգետիկական ու տրանսպորտին, ինչպես նաեւ տարածաշրջանի հակամարտություններին առնչվող հարցեր:

Պաշտոնական այցի ընթացքում, Վրաստանի վարչապետին ուղեկցում էր փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն, ինչպես

ՏԵՍԱԿԵՏ

ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ՎԵՐԱԴԱՐՉԱՎ ՉԵՌՈՒՄՏԱԹԵՐ

(Սկզբը՝ 1-ին էջում)

հայտարարեց, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններին «Վրացական երազանքը» խորհրդարան մուտք կգործի առնվազն 100 պատգամավորով: «Աջարիայում տեղի խորհրդարանում պատգամավորների քանակը կազմում է 21, «Երազանքի» պատգամավորների թիվը կլինի 16, պլուս-մինուս 10-12 տոկոս: Եվ եթե նախկինում ասել են, որ Վրաստանի խորհրդարանում կունենանք 95 պատգամավոր, ապա այսօր հավելն են, որ կունենանք 100 հոգի: Չեն պատկերացնում, որ 90-ից պակաս պատգամավորով մուտք կգործենք խորհրդարան: Դա ավելի դժվար է պատկերացնել, քան «Վրացական երազանքից» խորհրդարանում 115 կամ 100 պատգամավորի գոյությունը: Դա այդպես կլինի, քանի որ հասարակայնությունն էլ այդ կարծիքին է»,- հայտարարեց Իվանիշվիլին:

ըն յայնպես, ինչպես՝ դուք: Ունեն պատասխանատվության զգացում, որպեսզի ուժերիս ներածին չափով հոգան երկրիս կարիքները»,- ասաց նախկին վարչապետը եւ հավելեց, որ իր գլխավոր նպատակն է հասնել նրան, որ երկրի բոլոր քաղաքացիներն ունենան հավասար հնարավորություններ:

ՆՈՐԱԿՈՒՅՑ 100 ԱՐՏԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԳԵՆ ԷԼ ՀԻՇՈՒՄ

Անդրադառնալով 2012 թվականի նախընտրական խոստումներին, Վրաստանի նախկին վարչապետ Բիժինա Իվանիշվիլին ընդգծեց, որ դրանց նշանակալից մասը կատարվել է: Որպես օրինակ, նախկին վարչապետը նշեց 100 նոր արտադրամասերի կառուցումը, նշելով, որ թեման հաճախ շահարկվում էր, սակայն 100 նոր արտադրությունների շահագործումից հետո՝ մոռացության մատնվեց: «Մեղադրում են, իբր, «Երազանքի» օրոք առանձին նախագծեր դադարեցվեցին: Ինչպես դադարեցվեցին, երբ մեծ ծավալի ներդրումներ մուտք գործեցին երկիր: Եթե ութ տարվա ընթացքում Ազգային շարժման օրոք կառուցվեց 200 հյուրանոց, ապա վերջին չորս տարվա ընթացքում շահագործման հանձնվեց 170 հյուրանոց, բացվեցին 41 նոր արտադրություններ, եւս 5-ը հիմնարար վերանորոգման ենթարկվեցին, ինչը լրացուցիչ աշխատատեղեր ստեղծեց»,- հայտարարեց Բիժինա Իվանիշվիլին:

ՖԻՆԱՆՍԵՐ

100 ՄԻԼԻՈՆ ԴՈՒԱՐ՝ ԻՆԿՎԵՍՏԻՉԻՎ ԱՃԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ



Փաստաթուղթը ստորագրել են Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խաղոլիին եւ Վրաստանում բանկի մշտական ներկայացուցիչ Էլիսան Կայալը: Ծրագրի շրջանակներում բանկը

Վրաստանի եւ Ասիական զարգացման բանկի միջեւ ձեւավորվել է համաձայնագիր ինկյուզիվ աճի ծրագրի համար ներքին ռեսուրսների կենտրոնացման բարելավման նպատակով:

Վրաստանին հատկացնում է 100 միլիոն դոլար: Ծրագրի նպատակն է պետական եւ մասնավոր ներդրումների ավելացման համար ներքին ռեսուրսների արդյունավետ մոբիլիզացման իրականացումը: Ծրագրի շրջանակներում արդեն հաջողությամբ իրականացվել են այնպիսի միջոցառումներ, որոնք ապահովել են պարտքի կառավարման եւ ֆինանսադրամական ռիսկերի կառավարման զնախառնումները: Ձեռնարկվել են քայլեր նաեւ շուկայական կապիտալի զարգացման, ինչպես նաեւ կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ուղղությամբ: Նոր պայմանագիրը իրենից ներկայացնում է եռամյա ծրագրի եզրափակիչ փուլը: Ընդհանուր առմամբ, Վրաստանին արդեն հատկացվել է 250 միլիոն դոլարի արտոնյալ ֆինանսական ռեսուրս:

ՎՐԱՍԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԻՈՐԳԻ ՍԱԳԱՆԵԼԻՉԵՆ ԴԵՄՊԱՆԻ ՀԱՎԱՏԱՐՍԱԳՐԵՐԸ ՀԱՆՁՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

(Սկզբը՝ 1-ին էջում)

ոլորտներում երկկողմ կապերի խորացման եւ հայ-վրացական բարեկամության առափնյա ամրապնդման գործում: Գոհունակությամբ արձանագրելով, որ վերջին տարիներին բավականին աշխուժացել են բարձր մակարդակի միջպետական շփումները՝ Սերժ Սարգսյանը նշեց, որ Հայաստանում սիրով սպասում են Վրաստանի վարչապետի առաջիկա պաշտոնական այցին:

Իր հերթին, Գիորգի Սագանելիձեն վստահեցրեց, որ իր գործունեության ընթացքում կանի ամեն հնարավոր Վրաստանի եւ Հայաստանի միջեւ գոյություն ունեցող սերտ բարիդրացիական հարաբերությունները խորացնելու ուղղությամբ եւ հավելեց, որ իր համար մեծ պատիվ է պաշտոնավարել մի երկրում, որի դարավոր պատմությանն ու մշակույթին քաջածանոթ է: Չրուցակիցներն ընդգծեցին, որ ավանդական բարեկամության եւ երկու ժողովուրդների

միջեւ փոխըմբռնման պատմական հիմքի վրա խարսխված ակտիվ միջպետական երկխոսությունը համագործակցության նորանոր ուղղություններ նախաձեռնումը հիմք է: Սերժ Սարգսյանը եւ Գիորգի Սագանելիձեն համակարծիք էին, որ բարձր մակարդակի քաղաքական հարաբերությունների զուգահեռ, կան լայն հնարավորություններ եւ չօգտագործված մեծ ներուժ զարգացնելու առևտրատնտեսական հարաբերությունները, ընդլայնելու փոխգոր-

ծակցությունը հեռանկարային մի շարք ոլորտներում, ինչպիսիք են զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը, էներգետիկան, մշակույթը եւ այլն: Գիորգի Սագանելիձեն 44 տարեկան է: Տարբեր տարիներին դիվանագիտական պաշտոններ է զբաղեցրել Վրաստանի ԱԳ նախարարությունում: 2005-2013 թվականներին եղել է Հայաստանում Վրաստանի դեսպանության խորհրդակցան, Հայաստանում Վրաստանի արտակարգ ու լիազոր դեսպանորդ:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍԱՆ-ԱՄՆ


ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ ԵՐ

Օգոստոսի 30-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին համ- դիպում ունեցավ աշխատանքային այցով Վրաստանում գտնվող ամերիկ- յան կոնգրեսականներ Դուսկան Չանթերի եւ Մարկ Սենֆորդի հետ:



Վարչապետը ամերիկյան օրենսդիր- ներին շնորհակալություն հայտնեց ռուս- ների կողմից բռնազավթված Ցխինվա- լիի գոտի այցելելու եւ Վրաստանի տա- րածքային ամբողջականության պաշտ- պանության համար: Բացի այդ, վարչա- պետը ամերիկյան կոնգրեսականներին տեղեկատվություն հանձնեց խորհրդա- րանական ընտրությունների նախապատ- րաստական ընթացքի, երկրում 2012 թվա- կանից հետո իրականացված բարեփո-

խումների եւ Վրաստանի զարգաց- ման չորս կետից կազմված ծրագ- րի մասին: Կողմերը հանդիպմանը մասնավորապես քննարկեցին տա- րածաշրջանային կայունությանն առնչվող հարցեր: «Պատվիրակությունը շատ արդ- յունավետ հանդիպում անցկաց- րեց Վրաստանի վարչապետի հետ: Մենք քննարկեցինք վրացիների եւ ամերիկա- ցիների համար կարեւոր նշանակություն ունեցող հարցեր, ներառյալ տարածաշր- ջանային անվտանգության թեման»,- հան- դիպումից հետո հայտարարեց Չանթերը:



ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ը՝ ՎՐԱՑ ԽԱՂԱՂԱՐԱՐՆԵՐԻ ՕՐ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի պաշտ- պանության նախարարությունը, օգոստոսի 31-ը վրաց խաղաղարարների օր է հայտա- րարվել: Հաղորդագրության մեջ նշված է, որ 17 տարի առաջ, 1999 թվականի վրաց առաջին ստորաբաժանումը միջազգային խաղաղարարական առաքելության իրա- կանացման համար մեկնեց Կոստով:

Օրվա կապակցությամբ, Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզո- րիան հանդիպում ունեցավ Կոստովյուն խա- ղաղարարական առաքելություն կատարած վրաց խաղաղարարների հետ:

ԿՑԻՆԱՆԱՍՎՈՐԿԵՆ ԼՈՐԱՐԱՐԱԿԱՆ 20 ՆԱԽԱԳԾԵՐ

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրի- կաշվիլին պարզեցատրեց «Ստարտափ Վրաստան» նորարարական գործարարու- թյան աջակցության պետական նոր ծրագ- րի եզրափակչի մասնակիցներին: Ծրագրի մասնակիցներն իրենց բիզնես գաղափա- րի իրացման համար կստանան ֆինանսա- վորում: «Ստարտափ Վրաստանը» այն իրա- կանացնում է Վրաստանի կառավարության բարեփոխումների շրջանակներում:

«Ստարտափ Վրաստանին» մասնակ- ցելու համար ներկայացվել է ավելի քան 720 հայց: «Սիլիկոնյան հովտի» միջազ- գային փորձագետները 150 նախագծերից առանձնացրին 51-ը: Քննարկման արդյուն- քում, բացահայտվեցին 20 հաղթող նա- խագծեր, որոնցից յուրաքանչյուրը գաղա- փարի մարմնավորման համար կստանա 100 հազարական լարի:

ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱՅՈՎ ՀԱԳԵՑՄԱՆ ԾՐԱԳԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

Ընթացքի մեջ է գյուղտեխնիկայով գյու- ղատնտեսական կոոպերատիվների հագեց- ման ծրագրի համար գրանցումը: Այն կա- րելի է տեսնել գյուղատնտեսական կոոպե- րատիվների զարգացման գործակալության www.acda.gov.ge կայքէջում: Գրանցումը կշարունակվի մինչև նոյեմբերի 1-ը:

Ծրագրով սահմանված չափորոշիչներին բավարարելու դեպքում, կոոպերատիվները կարող են ձեռք բերել գյուղտեխնիկա (տրակ- տորներ) պետության կողմից 30 տոկոսա- մոց համաֆինանսավորման պայմաններում:

ԱՆՀԱՅՑ ԿՈՐԱԾ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄԸ ԴԱՂԱՐԵՑՎԵՑ

Ինչպես արդեն հաղորդել ենք, օգոս- տոսի 16-ին Բաթումիի մոտակայքում, Գո- նիոյի նախկին հրաձգարանի տարածքում, ՍԵԻ ծովում ծրագրված գորավարժություն- ների ժամանակ ծովում անհայտ կորան երկու զինծառայող՝ կապրալ Յագո Շա- րաձեն եւ առաջին կարգի շարքային Գի- որգի Նանետաշվիլին:

Միջադեպից հետո անցած ժամանակա- հատվածում, 11 օրվա ընթացքում որոնման աշխատանքներ էին իրականացվում, որոնց, վրաց զինվորականների հետ միասին, մաս- նակցում էին նաեւ Թուրքիայի ռազմածո- վային ուժերի նավի անձնակազմը: Որոնում- ները ոչ մի արդյունքի չհանգեցրին: Ներկա- յումս թուրքական անձնակազմն արդեն հե- ռացել է Վրաստանի տարածքային ջրերից:

Ինչպես տեղեկացրին պաշտպանու- թյան նախարարությունից, անհայտ կորած զինծառայողների որոնումները դադարեց- վում են, եւ ներկայումս գերատեսչություն- քը սկսում է զոհվածների ընտանիքներին անհրաժեշտ փոխհատուցման հանձնման ընթացակարգը:

ԱՄԵՐԻԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ՀԱՍՑՎԵՑ ՎՐԱՍԱՆ



Agile Spirit բազմազգ զորավարժություններին մասնակցելու համար, Բուլղարիայից լաս- տանավով Վրաստան է հասցվել ամերիկյան ռազմական տեխնիկան, այդ թվում՝ զրահա- փոխադրիչներ եւ հրանոթներ:

«Agile Spirit 2016» երկ- շաբաթյա զորավարժություն- ներն անցկացվելու են Ախալցխե քաղաքի մերձա- կա զորավարժարանում:

տանի, ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Լատվիայի, Ռումինիայի եւ Ուկ- րաինայի զինծառայողները:

Agile Spirit-ն ի սկզբանե երկկողմ՝ վրաց-ամերիկյան վար- ժանքներ էին եւ 2011 թվականից ամեն տարի անցկացվում էին Վրաստանում: 2015 թվականից դրանք դարձել են բազ- մազգ զորավարժություններ, երբ դրանց միացել են ՆԱՏՕ-ի գծով դաշնակից երկրները եւ գործընկեր պետությունները:

Եվրոպայում ԱՄՆ-ի ծովային հետեւակի ուժերի տեղեկատ- վության համաձայն, վարժանքներին մասնակցելու են Վրաս-

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Սեպտեմբերի 1-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եւ Բելա- ռուսի փոխվարչապետ Միխայիլ Ռուսին քննարկեցին վրաց-բելառուսական հա- րաբերությունների խորացման հեռանկարներ:



Նախօրեին Թբիլիսիում տեղի ունե- ցած հանդիպմանը կողմերը նշեցին, որ Վրաստանում Բելառուսի դեսպանա- տան բացումը կնպաստի երկու երկր- ների ավելի ինտենսիվ համագործակ- ցությանը տնտեսության, տեղեկատ- վական տեխնոլոգիաների, տրանսպոր- տի, զբոսաշրջության եւ գյուղատնտե- սության ոլորտներում:

աճի հեռանկարները: Խոսակցությունը վերաբերվել է նաեւ բելառուսական ընդգրկումն ցու- ցահանդեսին, որը սեպտեմբերի 1-ին բացվեց Թբիլիսիում: Ազգային ցու- ցահանդեսը Բելառուս երկրի սահ- մաններից դուրս պլանավորված ամե- նածավալուն միջոցառումն է: Դրա շը- ջանակներում կներկայացվեն բելա- ռուսական գյուղատնտեսական ար- տադրանքը, ագրոտեխնիկան, ինչպես նաեւ նոր տեխնոլոգիաները գյուղատն- տեսության եւ վերամշակող արդյու- նաբերության համար:

Բելառուսի պատվիրակությունը Վրաստանում էր գտնվում մասնակցե- լու տնտեսական համագործակցությա- նը մվիրված վրաց-բելառուսական միջ- կառավարական հանձնաժողովի աշխատանքին:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՔՆՆԱՐԿՎԵՑ ԲՈՒՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ



Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետ- նախարար Քեթևան Ցիխելաշվիլին հանդիպում ունեցավ Աբխազիայի տարա- ծաշրջանի ուղղությամբ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի նոր ղեկավար Կուրտմոլ Աբրուլզամիելի հետ:

Պետնախարարը հյուրին ներկայացրեց աբխազական տարածաշրջանի բռնազավթ- անքող իրավունքների խախտու- ման փաստերին, այդ թվում՝ տեղաշարժման, ազատության

ված տարած- քում առկա իրա- վիճակը, ուշադ- րություն բեւե- րեց այդտեղ

ու մայրենի լեզվով ուսուց- ման սահմանափակման թե- մայի վրա: Ինչպես հայտարարեց պետ- նախարարը, Վրաստանի ղե- կավարության համար հակա- մարտության խաղաղ կարգա- վորման գործընթացում ար-

տակարգ նշանակալից է մի- ջազգային գործընկերների ներգրավումը: Այդ առումով առանձնակի նշանակություն են ստանում ՄԱԿ-ի զարգաց- ման ծրագրի շրջանակներում վստահության վերականգն- մանն ուղղված նախագծերը:

ՊՍՏԱՅՐ

ՀԱՐՍԱՆԻՔ. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ ՍԱԴԱԽԼՈՅՈՒՄ

Թունավորման ախտանիշներով շուրջ 200 մարդ հոսպիտալացվել են Մառնե- ուլիի մունիցիպալիտետի Սադայլո գյուղում տեղի ունեցած հարսանիքից հետո:

Հոսպիտալացվածներից 28-ը երե- խաներ են, որոնցից 21-ը հիվանդա- նոցում են:

Մարդկանց մի մասը տեղափոխվել է Մառնեուլիի, Ռուսթավիի, Բուլնիսի- ի եւ Թբիլիսիի հիվանդանոցներ, մնա- ցածները տուն են ուղարկել առաջին

օգնության ցուցաբերումից: Հիվան- դանոցում «սուր աղիքային թունավո- րում» ախտորոշմամբ գտնվողների վիճակը, բժիշկների գնահատմամբ, կայուն է: Ենթադրվում է, որ պատճա- ռը ժամկետանց մթերքն է: Այդ փաս- տով Զ Գ նախարարությունը հետաքն-

նություն է սկսել:

Օգոստոսի 31-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվի- լին այցելել է Մառնեուլիի հիվան- դանոց, որտեղ հանդիպել է թունա- վորվածների, նրանց հարազատնե- րի հետ, խոսել բուժանձնակազմի ներկայացուցիչների հետ, հետաքրքը- վել թունավորվածների առողջական վիճակով:

ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ 64-ԻՑ 45 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ԳՐԱՆՑՎԵԼ

(Սկզբը՝ 1-ին էջում)

րական Վրաստանը» (Գիորգի Կվիրիկաշվիլի), «Միասնական ազգային շարժումը» (Սերգո Ռատոխանի), «Պետությունը ժողովրդի համար շարժումը» (Պատա Բուրժուաձե), «Վրաստանի հայրենասերների դաշինքը» (Դավիթ Թարխան Մուրադի, Իրմա Ինաշվիլի), «Միացյալ ժողովրդավարական շարժումը» (Նինո Բուրջանաձե), «Ազատ ժողովրդավարները» (Իրակլի Ալասանի), «Հանրապետական կուսակցությունը» (Խաթունա Սամիձե), «Քաղաքացիական պաշտպանության Վրաստանը» (Գիորգի Վաշաձե), «Քաղաքական նոր կենտրոն Գիորգի» (Ջուրաբ Ջափարիձե), «Ազգային ֆրոնտը» (Գուրա Ջափարիձե), «Ազգային ժողովրդավարական կուսակցությունը» (Բաշուկի Քարոյան), «Նոր աջերը» (Մամուկա Կազիմաձե), «Վրաստանի լեյբորիստական կուսակցությունը» (Շավա Նաթելաշվիլի), «Ժողովրդավարական իշխանությունը» (Ջուրաբ Կոբիաշվիլի), «Վրաստանը խաղաղության համար» (Դավիթ Թելաձե), «Արդարության

վերականգնման միությունը. ժողովրդի ծայր-Աստվածն է մեր ճշմարտությունը» (Միխեիլ (Գելա) Սալուաշվիլի), «Վրաստանի կոմունիստական կուսակցությունը» (Իվան Ծիկլաուրի), «Վրաստանը» (Գիորգի Լիլուաշվիլի), «Մեր հայրենիքը» (Ջիլադ Չիտիշվիլի), «Ժողովրդական կուսակցությունը» (Իվան (Մամուկա) Գիորգաձե), «Վրաստանի եվրոպական ժողովրդավարները» (Պատա Դավիթախա), «Վրաստանի պահպանողական (միապետական) կուսակցությունը» (Իրակլի Կոբրաձե), «Վրաստանի ազգային միասնության կուսակցությունը» (Գիորգի Գինճարաուլի), «Չեզոք Վրաստանը» (Վալերի Կվարցիանի), «Վրաստանի միասնական կոմունիստական կուսակցությունը» (Թեմուր Փիփիա), «Մերաբ Կոստավայի ընկերությունը» (Վաժա Արամիա), «Վրացական գաղափարը» (Լեւան Չաչուա), «Վրաստանի կանանց կուսակցությունը» արդարության եւ իրավահավասարության համար» (Խաթունա Մաճավարիանի), «Ձախ ալյանսը» (Կախաբեր Չաբանիա), «Ժողովրդավարական շարժում-միասնական Վրաստանը» (Դա-

վիթ Ասանիձե), «Հայրենիք, լեզու, հավատ» (Ջաուր Խաչիձե), «Ազատ Վրաստանը» (Կախա Կուկաձե), «Աշխատավորների սոցիալիստական կուսակցությունը» (Ջաուր Ջապոնշվիլի), «Ազատություն» Ջիլադ Գամսախուրդիայի ուղին» (Մախաբ Գորգասալիձե), «Ազգային ժողովրդավարական շարժումը» (Դավիթ Շուկալիձե), «Ապագա Վրաստանը» (Գիորգի Լադիձե), «Եվրոպական Վրաստանը» (Բեաիկ Դոնաձե), «Քարթուլի դասին» (Ջոնդի Բաղաբորիա), «Վրաց ավանդապահների միությունը» (Ակակի Ասաթանի), «Վրաստանի ուժային վետերանների եւ հայրենասերների քաղաքական շարժումը» (Գիա Բերձեիձե), «Վրաստանի քրիստոնեապապանողական կուսակցությունը» (Շոթա Մալաշիխա), «Նոր քրիստոնե-ժողովրդավարները» (Նիկոլոզ Գոգիձե), «Առաջնորդական ժողովրդավարական շարժումը» (Լաշա Մուրուա), «Ժողովրդավարական նորացում մեր Վրաստանը կիսալի» («Մերոնք») (Նինո Սամադաշվիլի), «Արդյունաբերությունը կիրկի Վրաստանը» (Ջուրաբ Տղեմալաձե):

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏՈՒ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ն Է

(Սկզբը՝ 1-ին էջում)

ները (բացառությամբ վարչապետի), ինչպես նաև ինքնավար հանրապետությունների նախարարները, պետական ենթակայության ներքո գտնվող հաստատությունների ղեկավարներն ու նրանց տեղակալները, ազգային անվտանգության խորհրդի, Ազգային բանկի խորհրդի, ֆինանսական վերահսկողության գործակալության խորհրդի անդամները, գլխավոր աուդիտորը եւ նրա տեղակալները, նահանգապետներն ու նրանց տեղակալները, մունիցիպալիտետների, սակրեբուլոների եւ վարչությունների նախագահները, քաղաքապետները, ՆԳՆ, ՊԾ եւ պետպաշտպանության համակարգի սպաները, դատավորները, ժողովրդական պաշտպանն ու նրա տեղակալները, նախագահի խորհրդականները, արդարադատության գերագույն խորհրդի անդամները, դատախազները, նրանց տեղակալները, օգնականներն ու քննիչները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՏԱՐԵՑՆԵՐԸ ԵՐԿՈՒ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՄՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՆ ԵՐԲ ՀԱՄԱՎՈՐՁԵ ԿԿՍԻ ԳՈՐԾԵԼ, ԲՈՒՈՐ ՔԱՂԱՔԱԳԻՆԵՐՆ ԱՎՏՈՄԱՏ ԿԵՐՊՈՎ ԿԱՆԴԱՄԱԿՅՎԵՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻՆ

Կենսաթոշակի բարեփոխումների օրինանախագիծը պատրաստ կլինի հոկտեմբերի վերջին: Բարեփոխման մոդելն արդեն հայտնի է մինչև 2018 թվականը կգործարկվի կուտակումային համակարգը, որի շրջանակներում քաղաքացին կենսաթոշակային հիմնադրամ է փոխանցելու աշխատավարձի 2 տոկոսը, եւ 2-ական տոկոս հիմնադրամ կփոխանցեն գործատունն եւ պետությունը: Համակարգի գործարկումից հետո, քաղաքացիներն ավտոմատ կերպով կանդամակցվեն հիմնադրամին, թեպետ հետո ինքնուրույն որոշում են կայացնելու մնալ, թե՞ դուրս գալ այդ համակարգից:

ղաքացիներն ավտոմատորեն կանդամակցվեն հիմնադրամին, սակայն հետո՝ բոլորին իրավունք է վերապահվում կատարել ընտրություն մնալ, թե՞ դուրս գալ հիմնադրամից: Դա չեն կարող պարտադրել ո՛չ ընկերությունները եւ ո՛չ էլ պետությունը, - պարզաբանեց Օթար Ձիժիկաշվիլին:

Նրա խոսքերով, քաղաքացին հիմնադրամից գումարներ կարող է դուրս բերել նրանից հետո, երբ

նախարարությունում, վերոնշյալ կենսաթոշակային համակարգը բավականին պաշտպանված մեխանիզմ է: Մի կողմից հիմնադրամի կառավարումն իրականացնելու է մասնավոր հատվածը, եւ այդ գործում պետությունը չի միջամտի, իսկ մյուս կողմից՝ այդ հիմնադրամի կառավարման եւ ներդրումային քաղաքականությունը, այսինքն՝ ռիսկ-պարամետրերը սահմանում է պետությունը ու կարգավորիչ մարմինը, կիրառական ցվերի ներդրումային գործընթացի վերահսկողությունը, մոնիտորինգը, որպեսզի այն համապատասխանի սահմանված չափորոշիչներին:

Կառավարությունում վստահեցնում են, որ կուտակումների կենսաթոշակային համակարգը առավել լավ կապահովի կենսաթոշակառուների պաշտպանությունը, քանի որ կենսաթոշակային տարիքին հասնելուց հետո, նրանք կունենան կենսաթոշակի հետ միասին հիմնադրամում կուտակված գումարից օգտվելու հնարավորություն:

ղադրիչից՝ մշակվում է ինդեքսացիայի մեխանիզմը, ըստ որի սոցիալական կենսաթոշակը անընդհատ փոխվելու է նվազագույն արժեզրկման մակարդակին զուգընթաց, եւ երկրորդ՝ կներդրվի կուտակումային կենսաթոշակային համակարգը:

Նշենք, որ կուտակումային կենսաթոշակային համակարգի գործարկման ուղղությամբ կառավարությունն աշխատանքը սկսեց երկու տարի առաջ: Ինչպես հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի նախարար, փոխվարչապետ Դմիտրի Քունսիշվիլին, կենսաթոշակային բարեփոխումների հետ կապված օրինանախագծերը պետք է պատրաստ լինեն հոկտեմբերի վերջին:

Կուտակումային մոդելի հիմնադրամի համաձայն, համաձայնակցության սկզբունքը կլինի հետեւյալը. քաղաքացին կենսաթոշակային հիմնադրամ է փոխանցելու աշխատավարձի 2 տոկոսը, 2-ական տոկոսի փոխանցում են կատարելու գործատունն եւ պետությունը: Ընդհանուր առմամբ, մի կենսաթոշակառուի հաշվով, հիմնադրամ կփոխանցվի աշխատավարձի 6 տոկոսի չափ գումար: Գործադիր իշխանությունը ծրագրում է կենսաթոշակային համակարգի նոր մոդելի ներդրումը իրականացնել 2017 թվականի հոկտեմբերից:



Կիսանի կենսաթոշակային տարիքի: Այն դեպքում, երբ կուտակված գումարը փոքր է, ապա կենսաթոշակառուն կկարողանա այն լրիվությամբ ստանալ, եթե գումարը

ցուցվածից հիմնադրամ փոխանցած գումարը, վերջինիս մահվան դեպքում, 100 տոկոսով կստանա նրա ժառանգորդը:

Ինչպես վստահեցնում են կառավարությունում, վերոնշյալ կենսաթոշակային համակարգը բավականին պաշտպանված մեխանիզմ է: Մի կողմից հիմնադրամի կառավարումն իրականացնելու է մասնավոր հատվածը, եւ այդ գործում պետությունը չի միջամտի, իսկ մյուս կողմից՝ այդ հիմնադրամի կառավարման եւ ներդրումային քաղաքականությունը, այսինքն՝ ռիսկ-պարամետրերը սահմանում է պետությունը ու կարգավորիչ մարմինը, կիրառական ցվերի ներդրումային գործընթացի վերահսկողությունը, մոնիտորինգը, որպեսզի այն համապատասխանի սահմանված չափորոշիչներին:

«Դա նշանակալի աստիճանի պաշտպանված համակարգ է, սնանկացման եւ գումարների կորստի ռիսկերը բացառվում են: Բնականաբար, միշտ եղել ու կարծեցրկման հավանականությունը: Թեպետ, այդ հարցում էլ հիմնադրամում կգործի պաշտպանության մեխանիզմը, եւ քաղաքացիները իրենց գումարների արժեզրկման վտանգի առջև չեն կանգնի»,- հայտարարեց էկոնոմիկայի նախարարության կենսաթոշակային բարեփոխումների դեպարտամենտի պետ Օթար Ձիժիկաշվիլին:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ԲԱՐՁՐԱԼԵՈՒ ԳՈՏՈՒ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ԿՍՏԱՆԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՀԱՎԵԼԱԿԵՐ

Սեպտեմբերի 1-ից 20 տոկոսով ավելացվել է բարձրալեռ գոտու բնակչի կարգավիճակ ունեցող կենսաթոշակառուների կենսաթոշակը: Ինչպես հայտարարեց աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության փոխնախարար Ջազա Սուպրոմաձեն, 180-ի դիմաց բարձրալեռ գոտու կենսաթոշակառուները կստանան 216 լարի: Կենսաթոշակի ավելացումը իրականացվել է 2016 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Բարձրալեռ տարածաշրջանների զարգացման մասին» օրենքի շրջանակներում:

20 տոկոսով ավելացվում է նաև սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց հանձնվող սոցիալական օգնությունը: Սեպտեմբերի 1-ից 180-ի փոխարեն նրանք էլ կստանան 216 լարի: Առանց կերակրողի մնացած ընտանիքները եւ քաղաքական բռնությունների ենթարկված անձինք 100 լարի դիմաց կստանան 120 լարի:

Վերջին տվյալների համաձայն, Վրաստանի մասշտաբով բարձրալեռ տարածաշրջաններում բնակվողի կարգավիճակ ունեցող կենսաթոշակառուների եւ պետությունից սոցիալական օգնություն ստացող մարդկանց թիվը հասնում է 52 հազարի:

Կրկնակի ավելացված կենսաթոշակ են նախատեսված բարձրալեռ գոտու բժիշկների համար, իսկ բուժքույրերը կստանան հավելավճար մեկ կենսաթոշակի չափով: Ավելացվում է բուժանձնակազմի աշխատավարձը տարածաշրջանային առողջապահության այնպիսի կենտրոններում, ինչպիսիք են Ծալկան, Թեթրիժղարոն, Բակուրիանի, Աբասթուանի եւ այլն: Սեպտեմբերից 35 տոկոսով ավելացվում է պետական դպրոցների ուսուցիչների միջին աշխատավարձը:

Բարձրալեռ գոտու բնակիչ ֆիզիկական անձինք ազատվում են եկամտահարկից եւ գույքահարկից, իսկ գործարարները՝ շահութահարկից եւ գույքահարկից:

Կառավարությունը փոխհատուցելու է նաև բնակչության կողմից ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի 50 տոկոսը: Վերոնշյալ հավելավճարների համար պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 1 միլիոն 800 հազար լարի: